ՆԷՐ կամ ԳԷՐ։ ԷԼԻՈՆ աւերակք եկեղեցեաց և տանց։ Ի Սեպուհ լերին են վանորայք անուանեալք, Ա։ՍԳ վանք զի 'ի Թադէէ ասի նոխ շինեալ, կոչեցեալ և Գառանոյ կամ Կառնոյ վանք, և այժմ ՏԷՐԷՎԱՆ։, յորում պահին պատուական նշխարք, և վանապահն աղգաւ Ժառանգութեամբ ունի զտեղին։ Ի հիւսիսոյ Նորա կայ Լուսաւորչի վանք 'ի գԺուարագնաց կոհակս լերինն, տեղի Ճգնութեան Լուսաւորչին մերոյ և հանգըստեան. և 'ի վերջ քան զայն գԺուարելանելի և գԺուարամուտ Այրն Մանէայ, Ճգնարան կուսին ընկերակցի Հռիփսիմեանց. կան առ վայրօքն և աւերակք ինչ զոր Տրդատայ-ԲԷՐԴ անուանեն, զի և մեծն այն Թագաւոր Ճգներ երբեմն աստանօր։ Յարևմտակողմն Սեպհոյ կան ՍԷՐՈՎԲԷԷՅ վանք մերձ 'ի Թառնէնք գիւղ, 'ի տեղւոջ տեսչեան Լուսաւորչին։ — Յարևելից լերինն կայ Թորդան գիւղ, ուր և դրախտ Լուսաւորչին 'ի տեղւոջ մեհենին Բարշամինայ կռոց՝ զոր կործանեացն, և անդ Թաղեցաւ մարմին Նորա գԼուսեալ 'ի Սեպուհ. անդ կան մինչև ցայսօր գերեզմանք Որդւոց Նորա և Թոռանց և տանն Տրդատայ, և կոչի տեղին ԻՆՆ ԳԷՐԷԶՄԱՆ։։ Իսկ ՀՐԻԷՀԱՆԳԻՈՆ վանք՝ առ ԷՐՄԵՆԷՅ գիւղիւ՝ լքեալ է, Նոյնպէս և ԽՈՆԷՊՈՒՐ որ է ԽՈՐՐՈՎԱՊԱՐ Ա։ՊՈՍԾԾԻՆ առ Մարէ։ գիւղիւ։ Նշանաւոր գեօղք են Բագառիճ կրկին, հայաբնակք, Ո-ԽՈՒ։ կրկին, Գոմէր, Ո-ՈՒԷ, և այլն։

63. Յարևմտից Դարանաղեաց կան երկու վիճակք փոքունք ԿԷՐՃԱՆԻՍ և ՀԷՑՈՒՆ, սահմանակիցք Փ. Հայոց, և են ԱՌԻՒԴ հին գաւառ Բարձր Հայոց։ Գլխաւոր տեղի 'ի սակաւածանօթ և լեռնավայր երկրիս է ՄէԼԻ։ԷՐԻՔ աւան, 'ի տեղւոջ հնոյն ԱՐՕՐԱԿԱՅ կամ Ա։ՐՈ-ՐԱԿԱՅՈՅ քաղաքի, ուստի էր Ս. Եւստաթիոս, և անդ կան գերեզմանք Նորա և ընկերացն։ — Յարևելից հիւսիսոյ վիճակացս և յարևմտից Բաբերդու կայ ԳԷԼԳԻՒՏ վիճակ, Շիմէն լերամբ անջըրպետեալ յԵրզնկայ, միջատահման Հայոց Մեծաց և Փոքրուն. ասա են ակունք Գայլ գետոյն Եկեղեաց, և ասասի անուն վիճակին Գայլ-գԷՐ ասուգաբանի. կոչի և ԶԻՓՏԼԻԿ, և են Նորա գեօղք իբրև 60։ Գլխաւոր տեղի Նորա է համանուն աւանն. բայց նշանաւոր 'ի հնումն էր ՍԱՏԱՂ կամ Սաթաղոյ։։ սահմանածայր Հայոց. որոյ աւերակք միայն կան ցայսօր. ասա դատեցան Եւսեբիոսի սանք, զի Հռովմայեցիք ունէին զքաղաքս որպէս սահման 'ի Հայոց կողմանէն։

Գ. ԽԱՐԲԵՐԴ ՆԱՀԱՆԳ

64. Ի ԽԱՐԲԵՐԴ կուսակալութեան Մեծին Հայոց պարագրի աշխարհն ԾՈՓԱՑ որ է Դ ՀԱՑԵՔ, և ունի սահմանս 'ի հիւսիսոյ զՄինձուր, զՏուժիկ և զԿեղի (54), յարևելից զգաւառն Մշոյ և զՏիարպէքիր, 'ի հարաւոյ զնոյն Տիարպէքիր և զՈՒռհա, յարևմտից զԵփրատ գետ որ ձևէ զսահմանս Մեծաց և Փոքրուն Հայոց։ Երկիրն լեռնային է և բնակեալ յազատաբարոյ Քրդաց։ Ընդ բովանդակ երկայնութիւն գաւառիս յելից 'ի մուտս անցանէ Մուրատ գետ այն է արևելեանն Եփրատ, եկեալ 'ի Տարօնոյ և 'ի Պայէզիտայ, և խառնի 'ի միւսն յարևմտեանն՝ 'ի Քրդաց։ Յաջմէ Մուրատայ որ է հիւսիսակողմն՝ կան վիճակքն Ճապաղջուր, Բալու, Զէհար-Սանճաք, Զմիկածագ, և այլ ևս վիճակք։

ՃԱՊԱՂՋՈՒՐ յարևելից կայ ընդ մէջ Կեղւոյ և վիճակաց Մշոյ և Տիարպէքրոյ, և զայդ անուն Թուի բերել վասն ջուրց իջելոց 'ի Պինկէօլ լերանց Ճապաղելոց 'ի նմա մինչև խառնեալ 'ի Մուրատ-Սու. և մասն է ՀԱՀՏԵՆԻՑ գաւառի հնոյ։ Գլխաւոր տեղի 'ի նմա է ՃԷ-ԼԻ? գիւղ աթոռ բէկի. և երկոքին գեօղքն Եօգոորը և Ա։ղաղ Բաֆենի? 'ի բարձունս 4800-5000։

65. ԲԱԼՈՒ վիճակ 'ի ԲԱԼԱՀՈՎԻՑ գաւառի հընում՝ կայ յարևմտից Ճապաղջոյ և 'ի հարաւոյ Կեղւոյ, յելից Զար-սանճագայ, յարևելից հիւսիսոյ Արզանայ և խարբերդոյ, զՄուրատ ընդ մէջ ունելով. հովիտ է բարեբեր իբր 80 գիւղորայիւք, որոց գԼխաւոր աւանն Բալու-յաջմէ Մուրատայ և յելից Լէջիկ ջրոյ, 'ի բարձու 3100'. ունի բերդ ամուր, յորում պատուի անձաւանման տեղի, ուր աւանդի Ս. Մեսրոպայ ընկալեալ յաղօթս զբրինակ հայերէն տառից և ստեղծեալ զնոսին։ Զորք եկեղեցիք են Հայոց 'ի Բալու և 650 տունք, աւելի ևս Քրդաց և Ցաճկաց։ Ի հիւսիսոյ Բալուայ կայ Հասս գիւղ, և 'ի նմա Քաղդրահայնոյ Ա։ՊՈՍԾԾԻՆ վանք՝ առաջնորդարան Բալուայ. կայ և այլ վանք լքեալ Ս. Խաչ անուն 'ի Թէլ գեղջ։ Ի հարաւոյ Բալուայ և գեղոյն Թըրի կամ Թըրի կամ Թիլիկ գիւղ, որ Թուի յանուն ԹԼԻՈՒՄ գաւառի, յոր ասպատակեցին զորք Տուղրիլայ և Ալբարսլանայ 'ի կէս ԺԱ դարու։ Ի հիւսիսոյ Բալուայ մերձ 'ի Հաւաճ՝ խոշոր գեօղ մեծ, և 'ի հիւսիսոյ Նորա Մեղիրէ աւան բարձր։

66. Ի մէջ Բալուայ յաջմէ Մուրատայ ցնստանուրդն ՅԵՓՐԱՏ կան չորք վիճակք մանուանք Զէհարսանճաք կոչեցեալք կամ Գարճոր, և են ՍԱՂՄԱՆ որ է ՑԱՂՄՆԱՑ երկիրն 'ի միջին դարս, ԲԵՐԴԻԿ, ՄԵՆՆԿԵՐՏ և ԲԵՐԻ, ոլք ԽՈԶՆԱՑ երկիր կոչէին 'ի հնումն. և 'ի մէջ ամենեցուն նոցա առ Եփրատաւ ՇՄՀԿԱԾԱԳՈՅՑ երկիրն, որ այժմ կոչի ԶԻՄԻՀԿԻԶԷԿ. քաղաքն համանուն առ վտակաւ օՀանգակաւ Մուրատայ յառաջն կոչէր ՑԵՐԱՊՕԼԻՍ, և զնոր անունն էառ վասն ծննդեանն 'ի նմա Յովհաննու Զմշկիկ կայսեր։ Արտաքոյ քաղաքին կայ Կուրբ Սարգ տեղի, ուր Յովհաննէս քահանայ նահատակեալ 'ի Բալու յամին 1403 շինեալ էր եկեղեցի զոր առ նախանձու քակեցին Թըշնամիք իւր։ Արևելեան մասն վիճակացս է հին գաւառն ՊԱՂԻՆ կամ ՊԱՂՆԱՑՈՒՆ։ — Ի հարաւոյ Զմշկածագու և Մուրատայ յարմինաձև միջոցի Եփրատայ յելից Մալադիոյ գաւառի Փ. Հայոց կայ ՔԷՊԱՆՄԱՑԻՆ վիճակ, այսպէս կոչեցեալ վասն բազուցն երկաթոյ և արծաթոյ, ոլք 'ի լերինս յայս կոյս և յայն գեղոյն մեծի. որում ընթեր կայ քաղաքաւանն համանուն. և 'ի հիւսիսոյ Նորա Նաւակամուրջ անցից գետոյն 'ի Փ. Հայս, ուր 'ի հնումն ամբառնայր Դասիոպա քաղաք, իսկ յայսմ կողման նշանաւոր էր Տոռոս բերդ, յորում պահէին գանձք Տիգրանայ Մեծին։ Կողմանքս այսոքիկ առ Նախնիս ԾՈՓՔ ՀԱՀՈՒՆԵՆԱՑ կոչէին։

67. Յելից Կապանայ, այն է Քէպան, կայ գլխա-